

## Գ Ա Ր Ո Ւ Ն Է Ե Կ Ե Լ

Ծանր ու խոր քնից կեանքը արթնացաւ,  
 Նոր օր, նոր յոյսեր, նոր գործի փափագ,  
 Երկնի քող ամպը սարերին իջաւ,  
 Ժպտաց ծիլ կեանքին մատաղ արեգակ:

Ամպով ու հովով սև շարան շարան,  
 Վերից կռալէն կռունկներն էկան,  
 Բեզար լողալով ծով կրծքում երկնի,  
 Իջան ու գտան բներն հայրենի:

Մենակ ես անտուն, անյոյս մնացի,  
 Բարձունքի կարօտ անթե ու անձէն,  
 Ախ, էս լայն ճամբին մոլոր մնացի,  
 Յոյսոյ ասաղս էլ ընկաւ երկնքէն:

Սարերը մէկէն ուժգին թափ տուին.  
 Լայն թիկունքների հաստ ձիւնէ վերմակ,  
 Եւ յորանջելով հովին փարուեցին,  
 Իրար ժպտալով մով մշուշի տակ:

Եւ կանաչ հազած հով զով սարերից,  
 Մեղմ քըչփըչալէն հազար թե առած,  
 Զնդան առուակներն էկան խնդալից.  
 Դէպի մայր երկրի կուրծքը արնոտուած...

Գարունքուայ շնչով սուս խլուշ-խլուշ  
 Ծաղիկներն ելան զառ կոկոններով,  
 Կենսալի ժպտով, բուրմունքով անուշ  
 Փունջ փունջ թառ էկան սարով ու ձորով:

Ախ, քանի գարուն բոլորան գլխիս,  
 էս գարունքներով ցաւը չի անցնի.  
 Գարուն է եկել... քանիսն են լալիս...  
 Արնոտ սրտերին գարունն ինչ անի...

Գառնիկ.

9 Մարտի.

